ABC | DOMAIN

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Նամակների զանգվածային տարածում ծառայության

1. **Ծառայության հասկացությունը**
Կատարողի կողմից վերահսկվող սարքավորման միջոցով Պատվիրատուին հնարավորություն է տրամադրվում էլեկտրոնային փոստով կատարել նամակների զանգվածային տարածում:

2. **Ծառայության մատուցումը**

2.1 Նամակների զանգվածային տարածումից, հետագայում՝ Ծառայություն, օգտվելու համար Պատվիրատուն ներկայացնելով պահանջվող տեխնիկական տվյալները, ինչպես նաև իր անհատական տվյալները (Նշանաբառ, Գաղտնաբառ, անվանում, հասցե, փոստային ինդեքս, հեռախոսահամար, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե, անձնագրային տվյալներ, ՀՎՀՀ և այլն) ստորագրում է Ծառայության Հավելվածը: Առաջին անգամ Կատարողից Ծառայություն պատվիրելու դեպքում Հավելվածի հետ միասին Պատվիրատուն ստորագրում է նաև ծառայությունների վճարովի մատուցման Պատվերը կամ առցանց եղանակով Կատարողի www.internetam կայքի միջոցով կատարում է Պայմանագրի կատարմանն ուղղված գործողություններ (եթե այդպիսի հնարավորություն առկա է Կատարողի կայքով):

2.2 Ծառայության ակտիվացման պահից Կատարողին պատկանող www.internet.am կայքի միջոցով մուտքագրելով իր Նշանաբառը և Գաղտնաբառը Պատվիրատուն հնարավորություն է ստանում ուղարկել էլեկտրոնային փոստով նամակներ իր կողմից իրականացված վճարին համապատասխան քանակով:

2.3 Ծառայության Հավելվածը գործում է տվյալ ծառայության համար կատարված վերջին վճարումից հաշված 90 օրվա ընթացքում:

2.4 Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել Ծառայության Հավելվածից այդ մասին 30 (երեսուն) օր առաջ գրավոր նամակով տեղյակ պահելով մյուս Կողմին, այս դեպքում կիրառվում են Ընդհանուր Դրույթների Պայմանագրի (ԸԴՊ) 8.1. կետով սահմանված հետևանքները:

2.5 Ծառայության Հավելվածի գործողության ժամկետի ավարտից հետո (անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է Հավելվածի գործողության ժամկետը դադարել) Կատարողին վճարված գումարը կամ նրա մնացորդը Պատվիրատուին չի վարադրաձվում:

3. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Կատարողն իրավունք ունի կասեցնել ծառայությունների մատուցումը, եթե Պատվիրատուի կողմից ծրագրի օգտագործման հետևանքով փոխանցված տեղեկատվությունը սպառնում է ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը, ցանցի անխափան աշխատանքին կամ ցանցում գործող համակարգիչների աշխատունակությանը, մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը:

3.2 Պատվիրատուի կողմից ուղարկվող նամակների հետադարձ հասցեն (Reply to) և ուղարկողի հասցե (From) դաշտերում լրացվող էլեկտրոնային հասցեն և տվյալները պետք է լինեն իրական, հավաստի և վերահսկվեն Պատվիրատուի կողմից:

3.3 Պատվիրատուն պարտավոր է իր կողմից ուղարկվող էլեկտրոնային նամակներում հնարավորություն ընձեռել նամակներ ստացողներին, նրանց ցանկության դեպքում, հրաժարվել հետագա նամակների ստանալուց:

3.4 Սույն Հատուկ պայմանների 3.1. 3.2. և 3.3. կետերով սահմանված յուրաքանչյուր կանոնի կարող է հանգեցնել Ծառայության մատուցման դադարեցմանը, դադարեցման դեպքում վճարված գումարը կամ վճարված գումարի մնացորդը Պատվիրատունին չի վերադարձվում, պատվիրատուն տեղեկացվում է Ծառայության դադարեցման պատճառների մասին էլեկտրոնային փաստով:

3.5 Պատվիրատուն կարող է ուղարկվող յուրաքանչյուր էլեկտրոնային նամակին կցել առավելագույնը 3 առդիր, որոնցից յուրաքանչյուրը չպետք է գերազանցի 1,5 Մբայթ ծավալը, իսկ յուրաքանչյուր էլեկտրոնային նամակի առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 6 Մբայթ:

3.6 Կատարողը պատասխանատվություն չի կրում Ծառայության միջոցով փոխանակված տեղեկատվության բովանդակության համար: Պատվիրատուի կողմից Ծառայությունից օգտվելու հետևանքով անձանց պատճառված վնասների համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. **Վեճերի լուծման կարգը**
Կողմերը բոլոր վեճերը լուծում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն Հատուկ Պայմանները տեղադրված են Կատարողի հաճախորդների սպասարկման կենտրոնում և հրապարակված վերջինիս պաշտոնական կայքում (www.internet.am):

6. Սույն Հատուկ Պայմաններում եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում: